




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6500

5S

ՍՐՏԱԳԻՆ ԽՈՍՔ

(ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԻՆ)

9(47.925)

Բ-49

Պետերատի II տպարան

ՅԵՐԵՎԱՆ

1924 թ.

5 SEP 2011

24 JAN 2006

ԲԵՆԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

9047.9257

P-49

ՄՐՏԱԳԻՆ ԽՈՍՔ

(ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԻՆ)



Պետրոսի II տպարան

ՅԵՐԵՎԱՆ

1924 թ.

04.05.2013

6500



ՄՐՏԱԳԻՆ ԽՈՍՔ

(Շահասահմանի հայ գաղութներին)

Ձեզ՝ մեր բնադավառ հայրենիքից հեռու, քաղաքական ու տնտեսական հանգամանքներից ցար և ցրվի, Գանգեսի ափերում ծվարած, Նեղոսի հովտում բուն դրած, Ամերիկայի յերեսին փոխած, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Պարսկաստանի և այլ յերկրների մեջ ապաստան գտած հայ հայրենակիցներ, խոսքս ձեզ հմ ուղղում:

Այդ սրտագին խոսքս բղխում և այն սիրուց, փոր մանկությունից տածել հմ ազգիս հանդեպ, այն պարտականության զգացմունքից փոր ունեմ դեպի հայ ժողովուրդը:

Այդ սերն և առաջնորդել ինձ դեպի վանք, դեպի կյանք:

Բանտերս, տաճարներս ի Սիրիո հաստատությունն են այդ սիրուն:

Կանխակալ կարծիքներն՝ յեթև կան, բանասերևու հերյուրանքները, փոր դժբախտարար բերրի հող են ունենում մեր ժողովրդի մեջ շահամոլների բերանով, ցրելու համար կարևոր հմ համարում հայտարարել, փոր յես յերբեք փորեկ քաղաքական կուսակցության չեմ հարած, չեմ հարի, քանի վերաբերուն վրաս հմ պահում:

Իմ ըմբռնումով հոգևորականը անխափր ամենի հայրը պիտի լինել. մինչդեռ կուսակցականությունը խորություն և դնում վորդիների մեջ:

Խոսքս սկսելուց առաջ նպատակս պարզեմ. յես պարտք յեմ զգում ծանոթացնել քեզ, սիրելի հայ ժո-



Փրանկովար № 1486

Տիրած 5,000 ուր.

32904-61

դովուրդ նախ՝ այն հնավուրց յեկեղեցու հետ, վոր դարերով ես պաշտել, ծանոթացնել քեզ նրա անցյալին, ներկային և գալիքին, ինչպես յես եմ ըմբռնում: Յերկրորդ՝ քո ուշադրությանը հանձնել քաղաքական, տնտեսական բարոյական այն ըմբռնումները, վորոնք վողեւորել են և քեզ, և ինձ վորոնք պիտի գծելին հայ ժողովրդի ուղին, վոր տաներ դեպի ազատություն և մի բարեկեցիկ կյանք: Յերրորդ՝ քո մտքի, աչքի, խըղճմտանքի առջևը դնել մեր ընդհանուր ըմբռնումների վերադնահատությունը և ներկա Հայաստանի վիճակը, գալիքի հեռանկարը, վորոնք քո հոգածության, փայփայանքի նյութ պիտի լինին, յեթե հիրավի հայը հայրենասեր ժողովուրդ է:

Ա. ՀԱՅՈՑ ՅԵԿԵԼԵՑԻ

Հայոց յեկեղեցին ընդհանուր քրիստոնեական յեկեղեցիներից մեկն է. նրանք հիմնված պիտի լինելին միայն Ավետարանի վարդապետության և նրա բարոյական գաղափարների վրա. ճշմարտության, բարության, արդարության, սիրո, ազատության, հավասարության:

Ավետարանը սոցիալական պարտաճանաչության կրոն է, գործնական կրոն: Նա այդպիսին յեղել է միայն նախնական քրիստոնյաների ժամանակ իր անաղավաղ վիճակում, յերբ քրիստոնեությունը գործ էր և կյանք՝ դաստիարակությամբ:

Պետական պաշտոնական կրոն դառնալուց հետո քրիստոնեության մարմնացումն՝ յեկեղեցին չարաչար և աղավաղել Ավետարանը:

Ավետարանի բովանդակության մեծ մասը նվիրված է դասակարգային կռիւն. նրա քարոզած հավասարությունը իրականաւ չի կարող դասակարգային

շերտավորումների և թագավորական իրավակարգի մեջ: Այդպիսի պայմաններում քրիստոնեությունը միայն աղավաղվել կարող էր և աղավաղվեց:

Կոստանդինոս կայսրը՝ պետական կրոն հայտարարելով քրիստոնեությունը, չարաչար աղավաղեց նրան կաշառված հոգևոր դասի ձեռքով:

Կայսրը ախրող դասակարգերի կողքին ստեղծեց մի նոր՝ հոգևորների դասակարգ, վորին արտոնեց ձեռք բերել հսկայական կալվածներ կտակներով, գնումով, նվերներով: Այստեղ մեծ ասպարեզ բացվեց հոգևոր դասի համար, վոր աներեսությամբ սկսան ամեն ներելի և աննրելի միջոցներով կալվածներ հավաքել իրենց դասակարգի համար: Հոռմեական ընդարձակ կայսրության հողերի ¹/₁₀ մասը յեկեղեցուն անցավ:

Հոգևոր դասի չափազանց հարստությունը առաջ բերեց փառթամություն, զեղխություն, շվայտություն:

Կոստանդին և իր հաջորդներից վոմանք արտոնեցին հոգևոր դասին ունենալ իրենց որենադրությունը, դատարանը: Այս արտոնություններով հոգևոր դասը հավատացյալների հոգին ու մարմինը հավասարապես կաշկանդող որենքներ սահմանեց հավատացյալների համար:

Քրիստոսի անձես, միայն գործնական կրոնը խճողեցին հրեական և հեթանոսական ծեսերով, վորոնց հետ կապեցին տուրքեր, անչափ, անսահման: Այդ ծանր բեռները չը շալակող հավատացյալները յենթարկվում էյին դաժան պատիժների, վորոնցից շատերի նմանը չըկա ու չի յեղել վորեւ պետական պատժական որենքների մեջ. որինակ՝ ջիւլերը կտրտել, լեզուն ծակել մեջը լար անցկացնել:

Ֆիզիքական պատիժների հետ միասին հորինվեցան և բարոյական պատիժներ. իսկ հալիտենական

տանջանքի, գեհեների կրակի սարսափն եւ միշտ կախ-
ված եր հավատացյալի գլխին: Եւ չեմ ասում պետա-
կան սուրն ու բանտը, վոր գրված եր հոգեւոր դասի
տրամադրութեան տակ ըմբոստ հավատացյալներին
կարգի բերելու համար:

Կայսերական կաշառքները վարձատրվեցան հո-
գեւոր դասի կողմից Ավետարանի ազատագրումներով,
վոր շահ եր կայսերական իշխանութեան, հարուստ,
տիրող, կեղեքող դասակարգերին:

Հոգեւոր վարչութիւնը կազմակերպվեց կայսե-
րական վարչութեան ձևով: Կայսրը իր շքախումբը 9
դասակարգի եր բաժանել պես-պես տիտղոսներով ու
արտոնութիւններով. Աստվածն եւ քարոզվեց յերկնքի
թագավոր իր իննը դաս շքախմբով՝ հրեշտակների 9
աստիճանակարգութիւններով:

Հոգեւոր պետն եւ շրջապատեց իրեն 9 դաս հո-
գեւորներով կամ աստիճանակարգութեամբ:

Կայսերական քաղաքական բաժանումների և ստո-
րաբաժանումների ձևով կազմակերպվեցին յեպիկոպոս-
ների իշխանութիւնները, իրենց յենթաբաժիններով:

Քրիստոսի կռիվը թագավորական իրավակարգի
դեմ եր, ըստ առաքյալի՝ «այս աշխարհի իշխանու-
թիւնների և պետութիւնների դեմ». մինչդեռ յեկե-
ղեցին Ավետարանի մեջ և նրան հակառակ հավելում-
ներ մտցնելով հնարեց թե թագավորի իշխանութիւնը
Աստծուց եւ թագավորների և բռնավորների համար
ազոթքներ հորինեց, մինչև իսկ նրանցից շատերին
սուրբերի դասը դասեց ու տոնեց, նրանց անունով
տաճարներ հիմնեց ու ուխտատեղի դարձրեց:

Քրիստոսն ասել եր թե՛ դուք մի յերկնավոր հոր
վորդի եք, ուրեմն մարդուն աստվածային ծագումն
տվեց. դուք բոլորդ հավասար եք յեղբայրների նման:

Վոչ վոքի տեր, աղա, պարոն մի ճանաչեք: Մինչդեռ
պետական ծիսական յեկեղեցին հավելումներ մտցնե-
լով առաքելական թղթերի մեջ, քաջալերեց ստրկու-
թիւնը, խիստ պարտականութիւններ դրավ ծառա-
ների վրա իրենց տերերի հանդեպ, իր որենքների մեջ
միևնույն հանցանքի համար խիստ, դաժան պատիժ-
ներ նշանակեց ստորին, աշխատավոր դասի համար և
շատ մեղմ հոգեւոր և վերին ուժեղ դասակարգերի հա-
մար և այլն:

Մեկ խոսքով Քրիստոսը, քաղցած Գալիլիայում
ծնված, քաղցածների և տառապալաների բարեկամն ու
պաշտպանը, վորի հետեւողները մինչև յերրորդ դարը
բացառապես ընչազուրկ աղքատներն եյին, խլվեց
նրանց գրկից, տաճարականների ձեռքով զուգվեց ար-
քայական ծիրանիով ու թագով և դարձավ շահագոր-
ծողների շահեր: պաշտպանող մի թագավոր Աստված:

Այսպես անարգվեց Քրիստոսի վեհ անունն ու
հիշատակը կաշառված հոգեւոր դասակարգերի ձեռքով:

Այս աղավաղ վիճակում քրիստոնեութիւնը Հա-
յաստանում հայտարարվեց պետական-պաշտոնական
կրոն և կազմակերպվեց հունական կայսերական յեկե-
ղեցու նման:

Յերեք հարյուր տարի նախնի հավատացյալները,
այս վրկչական պրոլետարիատը, անաղավաղ պահելով
Ավետարանի գաղափարները բոլորեցով կոտորվեցին,
այրվեցին հայ հեթանոս թագավորների և շահագործող
դասակարգերի ձեռքով: Բռնկված Քրիստոսի զգաց-
մունքներով իրենց թագաւոյան տեղերում հրդեհեցին
հայ հավատացյալների հոգին Քրիստոսի սիրով, մինչև
վոր թագավորն ու վերին դասերը սարսափեցան, ըն-
դունեցին նրանց հավատը պաշտոնապես, բայց աղա-
վաղելով այն դարձրին տիրողների, ուժեղների հավատ
և գենք իսկական հավատացյալների դեմ:

Հայաստանում թագավորը մնաց թագավոր, տիրող դասակարգերը մնացին իրենց տեղերում, հալածվածը մնաց հալածված, Բրիտանիա քարոզած համասարությունը դարձավ ցնորք, նրա բերած Աստծու արքայությունը՝ ժողովրդավար իրավակարգը, դարձավ յերազ ու տենչանք:

Այդ ժամանակից էլ սկսվեց նախնական քրիստոնյաների բողոքը պաշտոնական-ծիսական յեկեղեցու աղավաղումների դեմ: Բողոքողները պինդ կանգնած էին ավանդական քրիստոնեության անաղարտ հիմունքների վրա, վոր մարմին և արյուն էր դարձել ընչազուրկ հավատացյալների մեջ և մնացել հոգևոր դաստիարակություն և գործնական կրոն:

Ուժեղ դասակարգերը՝ կաշառված յեկեղեցական դասակարգի դաշնակցությամբ, գարհուրելի հալածանք հանեցին բողոքողների դեմ, անվանեցին նրանց «աղանդավորներ», բյուրերով կոտորել տվին ու նզովեցին նրանց հիշատակն ու նզովում են մինչև որս պաշտոնական յեկեղեցու բեմից հանդիսավոր ձևով: Յեվ այդ անեծքն ու նզովքը հեղեղում են այն Բրիտանիա անունով, վոր պատվիրում էր՝ յերբեք չանիծել, այլ միշտ որհնել:

Հայոց յեկեղեցին իր դասակարգային գորությունը ուժեղացրեց վանքերով: Վանքերն իրենց ծագումն առին Հռոմեական կայսրության մեջ, գլխավորապես Յեզիպոստում:

Նախնական քրիստոնյաները հալածանքի շրջանում քաշվեցին քաղաքներից բնության գիրկը. լեռների լանջերում, ձորերի ծոցերում, անտառների խորքերում նրանք մերթ մենակյաց, մերթ փոքրիկ խմբով իրենց համար ոթեաններ շինեցին, անձնատուր յեղան քրտնաթոր աշխատանքի, գլխավորապես յեր-

կրագործության և ապրեցին ու փայտայեցին քրիստոսի բերած հավասարության վողին: Հետո նրանք խոշոր ընկերակցություններ կազմեցին համայնակեցության հողի վերա. տեղ-տեղ նրանց թիվը 5000-ի հասավ:

Նրանք բոլորն էլ աշխարհիկ մարդիկ էին, վոչ մի կապ չունեցին պաշտոնական յեկեղեցու հետ, նույնիսկ սկզբներում յեկեղեցի էլ չունեցին: Նրանք միասին աշխատում էին, միասին՝ վայելում. յուրաքանչյուրը վայելում էր իր աշխատանքի չափով: Նրանք գործնական կերպով Աստծու արքայության հիմքն էին կառուցանում այս աշխարհի վրա: Նրանք հարստացան. աշխատանքի արտադրողականը գերազանցեց սպառողականին: Յեվ վորովհետև վոգևորված էին Բրիտանիա գաղափարներով, սեփականասիրության այբող տենչանքը անծանոթ էր նրանց հոգուն, ուստի և իրենց իրավակարգի մեջ հարստությունը չարիք չը դարձավ: Նրանք աշխատանքի ավելացածը սկսան գործ դնել բարեգործության վրա և նոր վանական ընկերակցություններ ստեղծելու վրա:

Սակայն Աստծու արքայության այս ծաղկյալ բջիջների գլխին կայսերական և կղերական մուրճերի հարվածն իջավ: Զգացին, վոր վանքերի համայնակեցական կյանքը գործնական լեիկ կոիվ և դասակարգերի դեմ, ուստի վորոշեցին՝ վերջ տալ նրանց:

Պաշտոնական յեկեղեցի՝ վանքերն իրենց հարստություններով ձևոք ձգելու համար, սկսավ համայնակյաց աշխարհականներից յեկեղեցականներ վերցնել. ապա հետգհետ բռնակալ իշխանության ուժով գրավեց վանքերը, նրանց բնակիչներին հոգևոր աստիճաններ տվեց և նրանցով ուժեղացրեց կղերական դասակարգը:

Այս վիճակում միայն վանքերը Հայաստան մրտան և առաջին վանականները հույն կրոնավորներն եյին, վորոնցով Լուսավորիչը լցրեց Հայաստան, վորոնք հեռացան Հայաստանից կամ չքացան, յերբ գրեթե գլուտից հետո հայ կղերը նրանց տեղը բռնեց:

Այս հաղթանակն ել քրեատոնեության վրա տանելուց հետո, հայ թագավորներն ու վերին դասերը հունական կայսրների որինակով սկսան ամեն կերպ զորեղացնել ծխական դասակարգային յեկեղեցին, վորպես իրենց դաշնակցի. բազմաթիվ վանքեր շինեցին, հսկայական կալվածներով հարստացրին, հոգևոր դատարաններով արտոնեցին:

Այդ անբավ հարստությունը պետք է մասամբ գործ դրվեր բարեգործության վրա. սակայն պատմությունը միայն Լուսավորչի ցեղը գիտե, մասնավորապես Ներսես մեծին, վոր պես-պես բարեգործական հաստատություններ հիմնեց և պահեց: Այդ հարստության մեծ մասն, ապա ամբողջը կղերական անաշխատ դասի վայելքին անցավ: Իսկ չափազանց հարստության արդյունքն ամեն տեղ նույնն է. փարթամություն, զեղխություն, վորկրամոլություն, անառակություն և վատշվեր կյանք:

Իբ ամբերիցը յետո՞ւ այդ վատթարագույն կյանքը պարզ յերևում է այն բազմաթիվ ժողովական կանոններից, վոր յեկեղեցին ստիպված է լինում սահմանել յեպիսկոպոսների, վարդապետների, քահանաների շահամոլության, յեսականության և անառակության դեմ: Սաղայն վուչինչ չի ոգնում: Հայ կղերականությունը այն աստիճանի հղիացել էր և ուժեղացել, վոր աշխարհիկ իշխանության վրա ճնշումն էր գործ դնում:

Յերևու թագավոր յեղան, վոր նրա մոլար ազդե-

ցությունը թուլացնելու մտքով յեկեղեցու կալվածները կարճելու ձեռնամուխ յեղան Արշակ Բ-ն ու Պապը: Յեվ անա կղերական պատմիչների գրչի տակ նրանք նկարագրվում են վորպես սոսկալի ճիվաղներ, բարոյական հրեշներ: Հայոց յեկեղեցու անբավ հարստությունն ու հոգևոր դասի փարթամ ու շվայտ կյանքը շատերի համար գայթակղություն յեղան. բազմաթիվ տգետ, անաշխատ անձեր յեկեղեցականի սքեմը հագան մեծ մասը կաշառքով և աշխատեցին այդ աստիճանը դարձնել ժառանգական:

Մեր պատմության մեջ կան որինակներ, վոր քահանայությունը պահվել է մի ցեղի մեջ 500 տարի:

Այժմ մի հարց է առաջ գալիս. Հայաստանի աշխատավոր ժողովրդի քրտինքն ու վաստակը վայելող հոգևոր քաղաքավար դասակարգը ի՞նչ աշխատանք է կատարել ժողովրդի բարոյական, տնտեսական, քաղաքական կրթական առաջադիմության համար:

Ավետարանի վարդապետության վերաբերությամբ պաշտոնական յեկեղեցին հակաքրիստոնեական բացասական դեր է կատարել և անա թե ինչպես:

Քրիստոսի քարոզած հավասարության հակառակ, նա նվիրել է իրեն արքայական, ազնվական և հարուստ դասակարգերի շահերի զորացման, ինչպես և կղերական դասակարգի խորացման ու ծավալման: Նա Ավետարանի հոգով չի դաստիարակել հայ ժողովրդին, այլ ներշնչել է նրան միշտ հնազանդություն, վորով ստրկացրել է նրան վերին դասակարգերին սիրեն և այդ ներշնչումը յեղել է Աստծու անունով և դրոշմվել հավիտենական տանջանքների սարսափով:

Հիսուսի քարոզած սերը, ճշարտությունը, արդարությունը, բարոյությունը միանգամայն անձանոթ են մնացել հայ ժողովրդին և այդ յեղած է նապ-

տակով, վորովհետեւ այդ զաղախարները և զգացմունքները մեջ ըմբոստացումն եւ թագնաված գոփող-ջուփող դասակարգերի հանդեպ:

Գիր ու զբաղանութիւնն ենք ունեցել, բայց տասնյակ դարերով նրանք յեղել են միայն կղերի սեփականութիւնն. թերթեցեք հայ հին մատենագրութիւնը և դուք մի հատիկ աշխարհական հեղինակ չեք գտնի, բացի մի Գրիգոր Մագիստրոսից, վոր կղերական վոգով եր տոգորված և ինքը կաթողիկոսի հայր եր:

Հայոց յեկեղեցու և քաղաքական պատմութիւնները լոկ հայ թագավորների, իշխանների և հոգևորականների պատմութիւններ են, իսկ ժողովուրդը պատմութեան նշույթ չի յեղել և մնացել եւ միշտ հետամնաց և ճանաչել և տիրողների, կղերի տիրապետութիւնն ու շահագործութիւնը, ինչպես և տաճարական կրօնը ճակատագրական ու հաշտ և մնացել իր ճակատագրի հետ:

Պաշտոնական յեկեղեցին բարոյական կրօնական որենքներ և շարադրել հավատացյալների համար, բայց այդ որենքները չեն կատարել կղերը:

Պատժական սոսկալի որենքներ կան, բայց նրանց յենթարկվում են միայն աշխարհականները, այն եւ ստորին դասերը, աշխատավոր գյուղացիք: Այս տեսութեան փաստերը յես թողնում եմ ուրիշ աշխատութեան, բայց մի յերկու որինակ կը բերեմ.

«Վոչ վոք չանարգի, չանգոսնի և չ'արհամարի քահանային, մինչև անգամ յեթե նա անարժանիք մեկն եւ լինի» (առաքել. կանոն 29):

«Յեթե մի քահանա անորդի մեռնի նրա կարվածները կարելի չե վաճառել վարդապետների ձեռքով միայն հոգևորականներին, աշխարհականները՝ յերբեք» (Դավինի Դ. 8):

«Յեպիսկոպոսից բանադրվածք յեթե մեռնի, քա-

հանան իրավունք չունի թաղելու», (Դավինի 11): Քրիստոսը վոչ բանադրել և և վոչ կապելու իրավունք տվել:

Յեթե ամուսնացած մարդը շնութիւն անի, նրան տուգանեն և ծեծին. իսկ յեթե գյուղացի յե՛ շատ ծեծեն և շատ տուգանք առնեն: Ծեծից ազատվում են ազատները, քաղաքացիք և աղնավանները» (Շահապիվանի ժող. 3):

«Յեթե մի սարկավագ, արեղա մծղնյությամբ պարապի կարգագուրկ լինի, ճակատին աղվեսադրոշմ դնեն, ջիւլերը կտրեն (սեռական անդամները). իսկ յեթե նախարարական տան մեջ գործվի հանցանքը, նախարարի ընտանիքը միայն նզովվին» (Շահապիվանի ժող.):

«Չորեքշաբթի և ուրբաթ միս ուտողը մի շաբաթ պաս պահի. յեթե վկայեն վոր չի պահել, գյուղի տանուտերը նրա յեզն առնի տա տերտերին» (Աղվանից ժողով.): Յեվ այլն:

Քրիստոսի քարոզած ուսմունքը կենդանի խոսքի, կենդանի գործի, աշխատանքի, թափի, ինքնակրթութեան, կենդանի որինակի կրօնն եւ:

Յեկեղեցին այդ ելակները մի կողմ դնելով, հրեյական և հեթանոսական ծեսերով խճողել, խճողել և կրօնը, կապել և հավատացյալներին ծեսերի, թափորների հանդեսների, արարողութիւնների հետ, վորոք հավատացյալի հոգուն բան չեն ասում, չեն դաստիարակում, այլ միայն աչք են շլացնում:

Ծիսական յեկեղեցին չի կամեցել հասկանալ, վոր մաքի զարգացման մի ուրիշ աստիճանում, աշխարհացոյց մի յերևույթի հանդես գալով, ծիսերը պատառ պատառ կը լինեն, ժողովրդի դատարկ հոգուն լքում կը տիրե և նա իր թիկունքը կը դարձնի զեպի անբովանդակ, խաբող յեկեղեցին:

Հայոց յեկեղեցու հայրերը սիրում են պնդել, թե մեր յեկեղեցին բարձր է կաթոլիկ յեկեղեցուց նրանով, վոր ազգային է, իր հայտարարությունները հիմնավորում են նրանով, վոր մեր կաթոլիկոսները, առաջնորդները, քահանաները, ժամկոչը ժողովրդի ընտրածներն են:

Բայց այդ միայն դատարկ խոսք է. իրականությունը հակառակն է ասում: Հայոց կաթոլիկոսներին միշտ ընտրել են «թագավորը, նախարարները, իշխանները, տանուտերերը, մելիքները»: Յեկեղեցական որենքով առաջնորդներին պետք է ընտրե ժողովուրդը. յեպիսկոպոսացուներին պետք է ընտրե ժողովուրդը. սակայն կաթոլիկոսները և իշխանները յերբ կամեցել են և ում կամեցել են յեպիսկոպոս և առաջնորդ են նշանակել, առանց ժողովրդի:

Պարսից և Ռոմանոսոց տիրապետության ժամանակ կաթոլիկոսներից նա եր նստում Լուսավորչի Աթոռը, ով ալիկի շատ փող եր տալիս պետության ներկայացուցչին: Ռուսաց տիրապետության որերում կաթոլիկոսներից միշտ ել պետության թեկնածուն եր հաջորդություն ունենում այս կամ այն կաշառված ազդեցիկ պատգամավորների ձեռքով:

Վերջին ընտրությունները կատարվել են քաղաքական կուսակցությունների և պետության ձեռքով՝ սպառնալիքների ազդեցության տակ:

Այս ճշմարտության հակառակ կարող են պնդել միայն նրանք, վորոնք աչք գոցել և խիզճ ծալել կարող են:

Հայ հոգևորները հավատացնում են թե՛ Հայոց յեկեղեցին կղերական դասակարգ չունի հաստատական ուրույն շահերով, այդ խաբեյություն է. իրականությունը հակառակն է ասում:

Թերթեցեք հայ յեկեղեցու ժողովրդական կա-

նոններն ու որենքները և պարզ կտեսնեք թե նրանք մխրազրված են կղերական դասակարգի ոգտին, ի վնաս ժողովրդի տնտեսության:

Հայոց յեկեղեցին անշափ ու անոահման կավածներ ու սեփական գյուղեր և ունեցել զարերով. այդ կավածները վայելել և միայն կղերական դասը. գալրոցները, բարեգործական հաստատությունները տնտեսապես պահվել են ժողովրդի հաշվով:

Կղերական դասի ձեռքում ամփոփված ահալին հարստությունը տվել է իր բացասական արդյունքը. շվախություն, գեղխություն, անսոակություն բուն են դրել այդ դասակարգի մեջ զարերով:

Այս մոլորությունները չէին լինի, յեթե հայ կղերը աշխատելին Քրիստոսով առաջնորդվել. Քրիստոսին նմանվել, Քրիստոսով դաստիարակվել:

Հայոց յեկեղեցին Քրիստոսին մեկուսացնելով՝ առաջնորդվել է հին կաակարանով, հրեկան բիրխայով և նրանով և դաստիարակել ժողովրդին յեկեղեցու բեմից և գալրոցներում:

Աստվածաշունչ կոչված գրքի և Ավետարանի մեջ վոչ մի նմանություն չը կա: Ի՞նչ նմանություն կարող է լինել վրեժխնդիր, միայն հրեյ ազգին կառչած մնացած ազգերին հալածող Յեհովայի և Քրիստոսի մեջ, վոր բոլոր մարդկանց յեղբայր է անվանում, իր սերը բոլորի վրա յե տարածում: Յեհովան հրեաների պատերազմական Աստվածն է, Հիսուսը խաղաղության սիրտ, բարության: Յեհովան աստծ է կրճտեցնում, վոր հարմար բոպե գա, վոր ոտարներին մանուկներին բռնի և քարերին ձեփի: Հիսուսը գթկում է մանուկներին, որհնում, փայլաշում:

Յեհովան նեղ, կարճամիտ հրեական հայրենասիրության ատեցող վոպին է: Այդ վոզով և ատեղու-

թյամբ հրեաները դարերով շարժեցին իրենց դեմ աշխարհի բոլոր ազգերի ատելութունը, վորոնք ամենուրեք կոտորեցին և ցարքեցրիվ արին հրեաներին:

Նույն վոգով հայ յեկեղեցին դաստիարակեց հայ ժողովրդին և ինքն ել նույն դառն արդյունքը ճաշակեց սկզբից մինչև մեր օրերը, հայ ժողովրդի հոգեվարժի օրերը:

Ընտիր անհատները, իսկական քրիստոնյա խմբերի կողմից փորձեր շատ են յեղել յեկեղեցին Քրիստոսին մոտեցնել, վորից հեռացած և, վերակենդանացնել Ավետարանի հիմունքով, դեն ձգել հրեական, հեթանոսական բարդ-բարդ ծեսերն ու ձևերը, բայց զրանք չարաչար հալածվել են և կոտորվել կղերական դասակարգի ներշնչումներով և թագավորական իշխանության ձեռքով ու աջակցութեամբ:

Չենք կարող չը խոստովանել, վոր հայոց ծիսական յեկեղեցու անջրդի ավազուտ անասրատում յեղել են և փոքրիկ ջրառատ ովազիւններ հանձին սակավաթիվ ընտիր յեկեղեցականների, վորոնք հալածվել են իրենց դասակարգից, բայց ծառայել են ազգին Քրիստոսի վոգով և ճշմարիտ հայրենասիրութեամբ:

Յերախոսագիտութեամբ ենք հիշում հայոց գրերի գտիչներին: Գիրն ու գրականությունը վանականների ձեռքով սահպանեցին հայոց լեզուն, գեղարվեստը, պատմությունն ու գիտությունը: Դրանցով դանազան ոտար թագավորների և բռնավորների յերկրներում ապրող ցրված հայությունը կապված մնաց ընդհանրաբար հետ, չըձուլվեց ոտարների մեջ, չըկորավ:

Այս և հայոց յեկեղեցու անցյալը:

Հայոց յեկեղեցու ներկան սոսկալի և իր բարոյական անկումով, իր բացարձակ անդործութեամբ, իր կղերի շահամուրթյամբ:

Անկման շրջանի հիմքը ուսահայոց յեկեղեցու մեջ դրված և 1836 թվականից, պոլոժենիայի հաստատությունից:

Ռուսաց կայսրությունը այդ պոլոժենիայով ներմուծեց մեր յեկեղեցին նրա վոգուն հակառակ հաստատություններ՝ սինոդ, կոնսիստորիա, հոգևոր կառավարություն: Նրանց վարիչները՝ յեպիսկոպոս թե վարդապետ, Ավետարանի պատգամները մի կողմ դրած՝ դարձան պատմության համար հոգևոր չինոֆիլներ, վարձատրվեցան լավ ոտճիկներով, հրապուրվեցան շքանշաններով, մեկուսացան ժողովրդից, անձնատուր յեղան կաշառքի և գոլության, հարստացան և ապականվեցան: Կղերի գեշ արարքները, գեշ օրինակը միշտ արտունջներ և հանել ժողովրդի կողմից: Յեղան հայտնի հատարակական գործիչներ Թաղիաթյան, Աբովյան (Յժմիածնի միաբաններից) Նալբանդյան, Նազարյան, վորոնք հայոց յեկեղեցու բարեփոխության խնդիրը գրին: Բայց չափազանց տգիտացած, շահամոլ կղերը կայսերական իշխանության ազդեցութեամբ չարաչար հալածեցին նրանց և լուցրին:

Այդ շրջանում գիրը, գրականությունը, դպրոցները, հայ ազգի քաղաքական կյանքը վարում եր յեկեղեցին: Հայ ժողովրդին ծառայելու ուրիշ ասպարեկ չը կար, բացի յեկեղեցականը:

Գեորգյան ճեմարանի 90-ական թվերի մի խումբ ընթացավարտներ ազգին ծառայելու համար, յեկեղեցու համատարած տգիտության դեմը կռվելու համար, յեկեղեցին բարեփոխելու տենչերով վերարկու հագան, վանական դարձան: Ասեալն հին, քաղաքած և ազդեցիկ վերին կողմից հիմնական յեղան, և վորովհետև նրանց կլինի կաթոլիկ կայսերական պատիժը սինոդի ձեռքով, անձարու յեղան ձեն հանել ու

զգված ներքին տարականությունից, լքուն, վերարկուները հանեցին ու գնացին դեպի կյանք: Դրանք՝ մոտ 10-15 հոգի սարկավագ ու վարդապետ, բարձրագույն կրթության տեր անձեր էին:

Բարացած կղերականությունը իրեն միանգամայն ազատ զգաց և անձնատուր յեղավ անգործություն, թալանի, հղիացումի և անառակության: Նրանց վարած քաղաքականությունը բացարձակ հակաքրիստոնեական էր և հայ ժողովրդին կործանեց:

Կղերական գասի բարոյական անկումը դարձավ պարշահատություն, վոր ամանել ու ծածկել չէր կարելի և ահա հանգես յեկան բուռն բողոքներ: Տասնյակ տարիներ առաջ Ամերիկայի «Հայրենիք» թերթը Վրոսայանի ստորագրությունը սոսկալի հարձակում գործեց հայոց յեկեղեցու վրա: Այդ հոգվածի մեջ կար այսպիսի արտահայտություն. «Պետք է կործանել այն ապականությունը, վոր կոչվում է հայոց յեկեղեցի»: 1905 թվին հայ յերիտասարդներից վոմանք շրջում էին գավառներն ու քարոզում կրօնի և յեկեղեցու դեմ ծանր խոսքերով: 1906 թվին ինչվոր «ազգային ժողով» անուշով մի գումարումն յեղավ Նշմիածնում, ուր ժողովականներից մեկը (Լևոն Աթաբեկյան) իր ճառի մեջը շեշտեց հետևյալը. «Զիկզծենք, մենք նախապես վորոշել և յեկել ենք Նշմիածնի պորտաբույժ, փնտաակար կղերին Նշմիածնից դուրս ձգելու»: Հետևանքն այն յեղավ, վոր սինոդը այդ մասին իմաց տվեց նախնադատին և վերջինս 24 ժամվա ընթացքում բոլոր ժողովականներին քշեց Նշմիածնից: Յընժում էին կղերն իրենց հաղթանակի վրա կարճատև իրեն:

1918-9 թվականին Թիֆլիսի «Հորիզոն», Յերևանի «Աշխատավոր» թերթերում սոսկալի մերկա-

ցումներ յեղան Նշմիածնի կղերի կյանքից ու գործունեությունից Թ. Թ. ստորագրած հոգվածներով: Ժամանակի միլիցայեակի մի պաշտոնական զեկուցումը Նշմիածնին անվանեց «անառականոց»:

Կենդրոնական յեկեղեցու այս բացարձակ անկման հետևանքը այժմ մեր աչքի առաջն է:

Բոլոր վանքերը թափուր են վանահայրերից, վանականներից և կործանման վիճակի մեջ, բոլոր հաջորդությունները թափուր, անտոլիլ, շատ առաջնորդություններ տարիներով առաջնորդ չունին: Ժողովուրդը հովիվներ չունի և պահանջ էլ չի զգում ունենալու:

Յեկեղեցիները գավառներում ու քաղաքներում թափուր են ժողովրդից, աղոթքի կարիք չեն զգում, իսկ քահանաները մերկ ու քաղցած, շատերը վերարկուները հանում ու տնձնատուր են լինում իրենց աշխատանքին:

Միակ վանքը, ուր դեռ պատմական «կանթեղն» տեղադրում է, Նշմիածինն է. ունի 14 վանական: Այստեղ թաղավորում է «Թխովի» հակաժողովրդական «Գերագույն խորհուրդը» իր անվանական նախագահ լաթոդիկոսով: Կաթողիկոսն իրապես իրավազուրկ է յեղած. նա իրավունք չունի կոնդակ արձակելու. նրա խոհակները կազմում է «Գերագույն խորհուրդը», լորի մեջ կաթողիկոսի ստորագրության կողքին դրում է իր ստորագրությունը անդամներից մեկը և իր նիքով վավերացնում:

Գերագույն խորհուրդը կազմված է միայն յեկեղեցականներից. վարդապետները ծառայողներ են իրան: Վոչ մի ժողովրդական, յեկեղեցական, դպրոսական, գիտական, բարեգործական գործ չի կատարում Նշմիածինը: Նա զբաղված է տնտեսությունը և

վայելքով: 14 հոգին ունի 44 դեսյատին ընտիր ալգի, 40 դեսյատին հող, 7 աչք ջրաղաց, 100-ի չափ կթու վոչխար, 18 կով, 6 մատակ, լծկաններ: Յեւ հավատացնում են աշխարհին թե քաղցած են:

Յուրաքանչյուր վանական ունի յերեք սենյակ փառավոր կահավորությամբ, բոլոր հարմարություններով:

Այս յեկեղեցու վանականն եմ յես շուրջ 33 տարի: Կայսրության ժամանակ վերարկուն եր միայն, վոր հնարավորություն եր տալիս աղգին ծառայելու և յես ընկերներով վանք մտա:

Այժմ մեր կուրության. մենք զրված եյինք մի յերկաթյա շրջանակի մեջ. քիչ եյինք անում ժողովրդի համար, շատ պետության համար, կղերական դասի շահերի համար:

Բողոքել չեյինք կարող. սինոդի մի գրչով բողոքավորը պիտի շլոկվեր սքեմից և նահանգապետի հրամանով բանտն յերթար:

Այդ ապականված անդունդից անվտանգ յեղնել կարելի եր սուս ու փուս միայն, և գնացին ընտիրները:

Սակայն յես կոչումն ընտրեցի ինձ համար աշխատել և միշտ բողոքել յեկեղեցու աշխատակութունների դեմ, հուսալով թե մի օր կենդանի դիակները հարություն կառնեն, կմաքրեն եջմիածինը իրենց գարշահոտությունից, անգթությանը, հալածանքին, գողությանն ու թալանին, գեղխությանն ու անառակությանը, պորտաբուծությանն ու պղերդությանը վերջ կտան և կըսարեփոխեն յեկեղեցին Ավետարանի հիմունքով:

Իմ բողոքս շատ հին ե. բողոքավոր գրականություն կա իմ թիկունքում: Եջմիածնի խայտառակ

աշխատակությունները յես կծու լեզվով հանդես եմ գրել «Նոր-Կար», «Հովիվ», «Հովիտ», մասամբ «Մշակ» թերթերում: Հրատարակել եմ «Անարդարության յերեսից», «Եջմիածնի արդարություն», «Ինչո՞ւ հեռացանք» «Հայրապետական ընտրություն» գրքույկներով: Տպագրություններից առաջ յես այդ ամենը բողոքավոր գեղեցունքներով գեղեցել եմ հայրապետիներին, սինոդին, վանական խորհրդին, միաբանական ժողովներին: Բայց քար սրտերին դիպել են այդ բողոքները, կատաղեցրել են նրանց, բուռն հալածանք ու բանսարկութուններ են հանել դեմս, բայց չեն համարձակվել պատժել ինձ: Ինչո՞ւ. վորովհետև ճշմարտությունը հալածվում ե, բայց և վախեցնում: Յես լավ գիտեյի եջմիածնի կղերի կյանքը: Ահա ինչ եր վախեցնում նրանց:

1924 թվի հունվարի 1-ի գիշերը կազմվեց գերագույն սե խորհուրդը: Յես այս դրության հետ չը հաշվեցի: Պաշտոնապես գրեցի այդ «խորհրդին» թե՛ յեթե չեք փոխի ձեր ընթացքը, յես ստիպված կլինեմ յեղնել ձեր դեմ իմ նոր քարոզով:

Զը լսեցին, ամենայն ինչ կատարյալ եր, յես վերջին պարտքս կատարեցի. վճռեցի գրքույկներով հրապարակի վրա դնել եջմիածնի ջոջերին իրենց համայն փառությամբ:

Ի դեպ. հունվարի 3-ին գերագույն խորհրդի կենդրոնական անդամ Մեսրոպ արքեպիսկոպոսն իր սենյակում ի միջի այլոց ասում ե ինձ հետևյալը. «Յերեկ վանական կառավարության չորս անդամի ներկայությամբ ասացի, այսօր ել անձամբ ձեզ եմ ասում հետևյալը. խոստովանում ենք, վոր վոչ մեկը մեզից ձեր խոսքի ույժը և աղեցությունը ժողովրդի վրա չունի. դուք յեթե կամենայիք եջմիածնի առաջին մարդը կլինեյիք, բայց չը կամեցաք»: Յես անմիջա-

պես ընդհատեցի նրա խոսքը, հասկանալով, վոր յես չեմ կամեցել համակերպել «գերագույնին»։ Նույն հունվարի մեջ կաթողիկոսն ինձ ասում է. «Խղճիս վրա ծանրացել ե, վոր յես ընկար, դու տասնուհինգ տարի առաջ պետք է յեպիսկոպոս լինեիր»։ Հանգստացնում եմ, վատահացնելով, վոր ես յերբեք չեմ ցավում, վոր յեպիսկոպոս չեմ։

Այնուհետև արձակուրդով հեռացա Եջմիածնից։ Ոգոստոսի 18-ին յես գրքույկներս տպարանին հանձնեցի։ Նույն ամսի 22-ին թե 23-ին Թիֆլիսի առաջնորդ Գեորգ յեպիսկոպոսը, վոր Յերեւանում եր, կանչում է ինձ առաջնորդարան։

Խորեն և Գեորգ յեպիսկոպոսները համոզում են ինձ, վոր մերկացումներ չանեմ. խոստանում են ինձ յեպիսկոպոսություն և առաջնորդություն՝ վոր թեմը կամենամ և վոր որը կամենամ. խոսքի և խոստման յերաշխափորությունը հանձն և առնում Խորեն արքեպիսկոպոսը։

Յես արհամարանքով մերժում եմ այդ կաշաքը և հեռանում։

Պարզ և թե մինչև 1924 թ. ոգոստոսի 23-ը յես արժանավոր և պիտանի էլի ճանաչվել հայոց յեկեղեցու հայրապետի և արքեպիսկոպոսների բերանով։

Թող ուրանան այս ամենը, յեթե այդ ուրացությանն ել ընդունակ են։

Ինչպե՞ս համար եմ դնում այս միջանկյալը։ Նրա համար միայն, վոր գրքերիս հրատարակությանից հետո շարագործների յետին թվով բարուբանքները կարողանան արժեքավորել լսողներն ու ընթերցողները։

Յես հրատարակեցի իրար հետևից 4 գրքույկ՝ «Թալանի վանքը», «Կոչ հայ քահանայության», «Կուսակրոնությունը անառակություն և» և «Եջմիածնի Գերագույն Խորհուրդը»։

Այդ գրքույկներով յես յեկեղեցու բարոյական փտությունն եմ դնում հայ ժողովրդի առաջ իրրե գերագույն դատավորի։

78 տարեկան բանասեր Բարդուղիմեոս յեպիսկոպոսը վավերացնում է զրաճներին ճշմարտությունը իր պաշտոնական դիմումի մեջ առ կաթողիկոսը սեպտեմբեր 24 թվակրով։ Այդ դիմումի մեջ ի միջի այլոց նա գրում է. «Յերբոք՝ սրա հետ ներկայացնում եմ Բենիկ վարդապետի հրատարակած «Թալանի վանքը» գրքույկը և խնդրում, իրրե միաբան նույն վանքի, դատել այդ խկադես թալանչիները և վաճառված դավաճանը ազգի, վորոնք փոչ միայն անպատիժ են մընում իրրե Մայր Աթոռ Եջմիածնին նախատինք, այլ և Ձեր պատվին սավեր բերողներ։ Ձեր «Գերագույն Խորհրդի» անդամներ եք նշանակել և խարազան տվել ձեռքները՝ վրեժներ հանելու անմեղներից։ Խոստանում եմ քննության և դատի ժամանակ անել ավելի դատապարտելի մերկացումներ, զորս Բենիկ վարդապետը կամ չի իմացել, կամ մոռացել է» (Տես «Խորհրդային Հայաստան», 1924 թ. № 224)։

Իր մի շարք գրքույկներով ինձնից առաջ հրապարակ յեկավ «Փառության ոճախի» գեմ Ալեքսանդրի (Լենինականի) առաջնորդ Սշոտ յեպիսկոպոսը։

Սշոտ յեպիսկոպոսը գրում է անարգության իջած իր կարգակիցների գեմ, նրանց խաբեբայության ու լրբությունների գեմ։ Յեկ Եջմիածնի սուրբերը, վորոնք հավատ չեն ունեցել ու չունին, իրենց յեկեղեցու տեղն են դնում և առանց նրան գառի հրավիրելու յեկեղեցական սրենքների հիման վրա, կարգալուծ են հայտարարում։

Յերեկ կարգալուծ կանեն այդ ինկվիզիտորները և ինձ և Բարդուղիմեոս յեպիսկոպոսին. այդ հոգ չեւ։

Նրանք ՆՋմիաթինն են դատարկում, վոր վերջը իրենց գլխին պետք է փչի, յեթե հայ ազգի արդարամտությունը այս հայ փարիսեցիների արդարությունից բարձր է:

Յեռ վերջացրի հայոց յեկեղեցու անցյալի և սեփական ներկայի մասին, գալիք յեկեղեցու բաղժը թողնելով հայ ժողովրդին:

Բ. ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԱԽԿԻՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

Հայ ժողովրդի քաղաքական դաստիարակը դարերով յեղել է հայոց յեկեղեցին. նա դաստիարակել է մեզ Հին Կտակարանի նեղ, ատեցող վոգով, այլ վոչ Ավետարանի լայն, մարդասեր վոգով:

Նրա ներշնչումը ժողովրդին յեղել է բացարձակ հնազանդություն թագավորին, ազնվականության, կղերականության և այդ ստրկական հնազանդությունը քարոզվել է, վորպես Աստծու կամք ու հրաման:

Թագավորի սերը դավանվել է վորպես հայրենիքի և Աստծու սեր: Այս ուղղությամբ ստեղծվել է ժողովրդի ստրկությունը վերին դասերին և սրբազործվել տիրողների բռնությունը:

Ժողովուրդը միշտ հետ է մղվել գիտությունից, վոր գիտակցության չը գա և ֆնացել մի կամազուրկ հոտ, վորին քշել են այս ու այն կողմ թագավորն ու ծիսական յեկեղեցին:

Տգետ ժողովուրդը ինքն համար չի կուլել, այլ միայն թագավորի և յեկեղեցու համար, ուստի և Հայաստանը հերոսական գիտակից զորք չի ունեցել, կամ շատ քիչ և ունեցել: Անհիմն չե պարսից Շապուհ թագավորի արհամարհանքը թե. «Իմ զորքերից ամեն-

նախառ զինվորը ասորին է, ասորուցն էլ վատը հայն է»: Իզուր չէ, վոր մեր ուրերում տաճիկները ծաղրում են հային, վորի 35,000-ոց բանակը դուրս քշվեց Կարսից տաճիկների 400 առաջապահ վաշտով:

Տգետ, ստրկացած ժողովրդի բնավորությունը բարոյապես այլանդակվում է. ուժեղի առջև ստրկացողը, իր հերթին բռնավոր է դառնում իրենից տկարի հանդեպ: Այս գիծը բնորոշ հատկությունն է մեր ժողովրդի իրար հանդեպ:

Քրիստոսը, իր առաքյալները իրենց կոչումն են բնորոշել կուլել աշխարհի թագավորների «իշխանությունների և պետությունների դեմ», հայոց հրեամիտ յեկեղեցին թագավորների իշխանության ուժեղացման գործիքն է դարձել: Նա թագավորների թուրն է որհնել, նա թագավորի հաջողության համար աղոթքներ է սահմանել թե՛ Աստված մեր թագավորի մի զինվորը թշնամու բանակից հաղար մարդ կոտորի, իսկ յերկուսը՝ տասն հազար մարդ: Նա Ավետարանի հակառակ պատերազմ, արյուն ու ավեր է գրգռել, ատելություն ու դաժանություն ներշնչել հայ ժողովրդին դեպի ոտարը՝ և այդ ատելության հետևանքով ատվել է բոլոր ազգերից, հալածվել, կոտորվել, ցաք ու ցրվել դարձել և բաղդակից հրեային, վորի հոգին է հագել հայոց դաստիարակ յեկեղեցին և հագրել իր հոտին:

Յեւ լի՛նջ թողին մեզ ժողովրդին տգիտության մեջ թաղող, ստրկությամբ դաստիարակող մեր թագավորներն ու «քաջարի զոված նախնիք. լացի, վողբի անփառունակ մի հայրենիք»:

Յեւ դարերով մեր կուրության մեջ հայրենիքի փրկությունը ժողովրդի գիտակցության մեջ չենք վորոնել, այլ թագապսակ մի գլխի Ավաղ ամենքիս և իմ կուրության, վոր մեր ջանքերի և աշխատանքների

մեջ միշտ յերազել ենք վերադարձնել Արտաշեսների և Տիգրանների որերը. այն Տիգրանի, վոր յերկու հարյուր հազարանոց բանակով ջարդ ու վշուր յեղավ հռովմեական 25,000-ոց լեզեմնից: Մենք յերազել չեյինք կարող թե թագավորական կառավարությունից դուրս կարող ե լինել մի այլ կառավարություն, ուր թագավորը ինքը ժողորուրդն է, վորի ձեռքում հայրենիքն ավելի ապահով կարող ե լինել:

Ուրիշ բան կը լիներ, յեթե հայրենիքի պաշտպանության դաստիարակները Քրիստոսի վողով դաստիարակելին մեր ժողովրդին՝ կատարելության ե արդարության զգացմունքով:

Կատարյալ կարելի ե լինել միայն զիտակցությամբ, մտավոր լույսով, արդարամիտ կարելի ե լինել միայն ինքնաքննադատությամբ, «ծանիր զքեզ»-ով: Յերկու սոսկալի բաց հայ յեկեղեցու ե ժողովրդի մեջ:

Հառաջագիմության արյունատար յերակը, են կենսականը ժողովրդի տնտեսական բարեկեցությունն ե. մինչդեռ տնտեսական բարեկեցության վրա ժողովրդի զեկավարները ամենին ուշք չեն դարձրել: Մեր յերկրի յերեսը ծածկվել ե հույակապ, հարուստ վանքերով, ուր ծովափել ե ժողովրդի քրտինքն ու վաստակը հավիտենական յերանության խոստումով. իսկ ինքը այդ աշխատավոր, բեռնակիր ժողովուրդը ապրել ե ցայսօր Քսենոֆոնի նկարագրած տնեղում, աշխատել նախապատմական գործիքներով, չի ունեցել մի կարգին ճանապարհ, չի մշակել արդյունաբերության մի ճյուղ, չի վստոգել իր ընդարձակ դաշտերը ջրանցքներով, չի մտել մեր հարուստ յերկրի խորքը գնտնատարած հանքերը հանելու, չի յեղել արդյունաբերության ներկայացուցիչը աշխարհի շուկաներում ու ապրել ե խլուրդի պես իր հողածածք խուղերում կիսամերկ

վիճակով: Յեվ մեր ժողովրդի պարավոր հետամնացությունը իր լոյսը թշվառություններով հանգերձ այրող բողոքն ե հայ ժողովրդին զեկավարող հոգևոր դաստիարակների զեմ, արքայական իրավակարգի զեմ: Իսկ մոլորության արդյունքը՝ հաղարավոր վանքերի ավերակներն ու յեկեղեցու հոգեվարքը:

Արդար ե ժամանակը, վոր զիտե մոլորությունը պատժել: Ծախված հոգևոր դասակարգի քարոզած բարոյական դադավարներն ել համապատասխան արիւն լինեն իրենց տված դաստիարակությանը ե փառաբանած իրավակարգերին:

Գերագույն առաքինություն ե բարոյական որենք ե քարոզվել միշտ կույր հնազանդությունը, խոնարհությունը, համբերությունը, լուռ տառապանքը: Յեվ այս արել են Քրիստոսի անունով:

Քրիստոսը մարմնացյալ ըմբոստացումն եր հեթանոսական, հրեական ծիսական տաճարների զեմ, աշխարհի խոնարհությունների զեմ, շահագործող իրավակարգի զեմ:

Յեկեղեցու քարոզած խոնարհությունը անիրավության, բռնության, վոր սպանում ե մարդու մեջ ինքնավստահությունը, հոգով ու մարմնով ե ստրկացնում, յերեք հեղափոխական, աշխարհի մեջ «հուր ու սուր» բերող Քրիստոսինը չեն:

Ծիսական յեկեղեցու մամռոտած քարոզիչները իրենց քարոզած «խոնարհությունը» հիմնում են ավետարանի մեջ գրված այս խոսքի վրա թե՛ յեթե մի յերեսիդ ապտակ հանեն, միուսը դարձրու: Մինչդեռ զիտենալու ե, վոր Ավետարանի գրության ժամանակ տիրող դասակարգերի ազդեցության տակ նրա մեջ մտել յեն հակաքրիստոսյան հավելումներ ի հաճույս այդ դասակարգերի: Այն Քրիստոսը, վոր

քահանայետի ծառայից ստացած ապտակի դեմ բուռն կերպով բողոքեց, նա չէր կարող ասել թե՛ մի յերեսիդ վոր ապտակ ծեփեն մյուսն եւ դեմ արաւ Այն Հիսուսը, վոր, «ոձեր», «իժի ձագեր» եր անվանում կեղեքող դասակարգերին, չէր կարող իր հետևողներին խրատել թե խոնարհ յեղեք նրանց։ Այն առաքեալները, վորոնց պատերազմը «այս աշխարհի իշխանութեանց և պետութեանց դեմ» եր, չեյին կարող քարոզել թե ծառաներ հնազանդ յեղեք ձեր տերերին, ձեր թագավորին ինչպես Աստծու։ Թագավորները գահերը շարժող Գրիստոսն ու առաքեալները չեյին կարող գրել թե՛ թագավորի իշխանութունը Աստծուց եւ։

Այդ ամենը Հիսուսի վեհ անվանը անարդանք բերող հավելումներ են յետին թվով, կաշառված հոգեւոր դասերի ձեռքով կայսրների և հոգեւոր դասի դաշնակցութեան որերում։

Գրիստոսը քարոզել և համբերել այն նեղութուններին, վոր գալու և ուժեղ դասակարգերից պայքարի, տաք կռիւի ժամանակ. առանց այդ համբերութեան գաղափարի գինվորը կը կորցնի իր անկուսութիւնը և պայքարը տանուլ կը տա։

Նա յերբեք չի քարոզել թե խաչը թեթևութիւնն է, հիվանդութիւնը՝ լալ, զարդարանքը ցանկալի աշխարհի անիրավութեան յերեսից, մինչդեռ յեկեղեցին հենց այդ համբերութիւնն է քարոզել։

Այս և նման առաքինութիւնները, բարոյականութիւնը, Ավետարանի իմաստով անբարոյականութիւնն է և մեր որերում զարթած գիտակցութիւնը ծաղկում, ավելում է այդ անբարոյականութիւնը կյանքից։

Իմացականութիւնը բարձր է ամեն տեսակ առաքինութիւնից։ Բարձր իմացականութեամբ ոժտված

ժողովուրդը ինքն իրեն համար բարոյականութիւն և առաքինութիւն կստեղծի և չի կաշկանդվի բռնութեան ձեռքով իր վզիցը կախած կեղծ բարոյականութեամբ։ Յեւ ինչ այդ իմացականութիւնն է, վորի գլխին քար են ձգել հոգեւոր դաստիարակները հոգեւոր շինծու, կեղծ առաքինութիւններով։

Գ. ՄԵՐ ՀԻՆ ԸՄԲՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Այս խնդրի մասին խոսելուց առաջ պետք է կանչեմ՝ որհնչալ լինեն հեղափոխութիւնները. դրանք թմրած մարդկութիւնը զարթեցնող կոչնակներն են, կյանքի ճահիճն ու մթութիւնը վանող փոթորիկները, խավար մտքերի մեջ լույսի շողեր սփռող հրդեհները. կաղերին վտաք, կուլրերին աչք պարզեցող հրաշագործ զորութիւնները։

Այս ճամբին հին հեթանոսական փրած աշխարհահայացքը կործանող, նոր աշխարհահայացք կերտող հեղափոխական մարդասեր Հիսուսի ճամբնն է։

Մարդկային հառաջադիմութիւնը աստիճաններ, ետապներ ունի. և նրանցից ամեն մեկը հեղափոխութեամբ է սկսվում։

Հայ ժողովուրդը հեղափոխութիւնն չի ունեցել, վորովհետեւ բարձր իմացականութիւնն չի ունեցել, ուստի և իր հին ըմբռնումների մեջ քար և կտրել ու մնացել միշտ յենթակա տիրողների, կեղեքողների, խտրեւանների։ Միայն յեկեղեցական հեղափոխութեան փորձեր յեղել են «աղանդավոր» կոչված հեղափոխականների ձեռքով, նրանց եւ իրենց ըմբոստ գաղափարների խանձարուրումն և խեղդել թագավորական և կղերական իշխանութիւնը միացալ ուժերով։

Թուսաստանի համաշխարհային հեղափոխության
կենդանարար շունչը ղեկավարվում է հայ յերիտասարդ մի-
բանակի, վորոնք ջանք ու կյանք չը խնայեցին հեղա-
փոխել նախ հայ ժողովրդի բնավորությունը և հեղա-
փոխություն մտցնել նրա քաղաքական և տնտեսական
կյանքի մեջ:

Հայ գաղափարական կոմունիստները Հայաս-
տանի ղեկավարությունն ստանձնեցին հայ ժողովրդի
ցանակությունը, այն վայրկենին, յերբ տաճկական
զորքը մեր տան շեմքի վրա էր կանգնած և պատրաստ
բնաջնջելու հայ ժողովրդի մնացորդը, վոր լեղապատտ
ապավինել էր Յերևանի նահանգը: Այդ որերի հայ
ժողովրդի սուգը, շիվանք, վհատությունը ինձ հիշեցնում
էր ջուղայեցոց բռնի դաղթի պատկերը, վոր սրտաճմլիկ
կերպով գծել է Դավրիժեցին: Կոմունիստ հայ հեղա-
փոխության ճկուն միտքը տաճիկների սարսափի հան-
դեպ փրկության յեղք հանձարեց:

Գիտակցելով, վոր քարուքանդ Հայաստանը ան-
կարող է, անկախորեն, ինքնապուխ ապրել ու պաշտ-
պանվել, նրան մտցրին խորհրդային միություն մեջ
և այդ միության անունով հայտարարությունը հետ
դարձրեց տաճիկ զորքերին ու փրկեց մեր ժողովրդի
մնացորդը անխուսափելի բնաջնջումից:

Անդունդի բերանում միայն հայ ժողովուրդը
գիտակցեց, վոր «արյունածարավ գտված Յևրոպան»
վոր հնարավորություն ուներ հայ ժողովրդին փրկելու,
չարաչար խաբել և հայ ժողովրդին և նրա արյան
գնով հողամասեր և ձեռք բերել իրեն համար: Խորհրդ-
ային իրավակարգը Հայաստան մտնելով հիմք դրեց
մի նոր աշխարհահայացի՝ իսկական ազատություն
բանությունից և ներքին կեղծ ու պատեր կաշկան-
դումներից:

Հայաստանն իրոք ազատ է իր ինքնուրույն քա-
ղաքական ներքին կյանքով, ազատ իր ազգային ան-
կաշկանդ մտավոր հառաջադիմությունը:

Քաղաքական ազատությունը վերսկսված է մեր
յերկրի պատկերը: Չը կա ձեռող աղտ և վոչ ձեռվող
ճառա. չը կան պրիստավ, ռես, կոմիսար տանուտեր
և վոչ նրանց մարակի ու քաջու տակ հեծեծող գյուղա-
ցի, բանվոր, կանայք. չը կա բռնացող, ուստի և չը կա
ստրկացող: չը կա խտրություն մարդկանց մեջ, վո-
րովհետև դատակարար չը կա:

Կա միայն մի իշխանություն, վոր հսկում է բո-
լորի ազատությունը:

Ա. Վ. ՄԱՍԼԱՆՈՎ: Մեր պատմության, ինչպես և
մեր ապրած իրականության մեջ պետության և
յեկեղեցու համար աշխատանքը վոչ բարձր առա-
քինություն է քարոզվել և վոչ քաջալերվել: Մինչ-
դեռ Խորհրդային Հայաստանում աշխատասիրությունը
առաքինություններից են գերազանցն և, վոր զորե-
ղապես քաջալերվում է: Մեր տյժմյան յերկրը մի
մեղվանոց է. ուր տմենքն են աշխատում և ֆիզիքա-
կան և մտավոր կերպով. իրավակարգից է բղխում այդ
համատարած աշխատանքը: Դարերով անձանոթ քըր-
տինքն է պողել մեր հարուստների ճակատին, նրանց
ձեռքերն յեղեր են ձեռնոցներից ու աշխատանքի կալել.
դարերով անձանոթ ժպիտն է ծաղկել աշխատավոր հայ
գյուղացու դեմքին: Նա հող չունեի, հող ունի, կորա-
քամակ էր բարձրուշեղ և քայլում:

Այս տարորինակ աշխատասիրության վարիչ-
ները կենդանի որինակ են ժողովրդին. բանվորը աշ-
խատանքի որակաւ ժամեր ունի, սրանք ժամեր չու-
նեն, աշխատում են ցերեկ ու գիշեր, գիշեր ու ցերեկ:
Յեռում է մեղվանոցն աշխատանքով և միայն
անաշխատ բռներն են, վոր այստեղ տեղ ունենալ չեն
կարող:

Աշխատանքը մաքրում է մարդուն. ժամանակ չի տալիս զեղիս ու շռայլ կյանքի, սանձարձակ քեֆերի, և լուր են հայի պատմական քեֆերն իրենց գարշ ու հաճախ արյունոտ հետևանքներով:

Այստեղ չկան այլևս հաստատվոր մարմիններ, վորոնք՝ հարկավ, իրենց մաշված փորն են ավաղում և դժգոհ են, բայց և չկան փողոցներում ցմբած, սմբած, փութները դուրս ցցված յերերվող, տատանվող կմախքացած աղքատներ:

Սորհրդային Հայաստանը վողորմածությունը կամ վողորմություն տալը արժանիք չի ճանաչում, վոր ծուլությունն եր ծավալում, այլ արդարության պահանջը, աշխատանքից, վաստակից:

Լուսավորութուն: Մտքի լուսավորությունը հիմքն է իմացականության և ինքնաճանաչության: Իսկ աղքային լեզու ու գրականությունը զույն են տալիս իմացականությանը, վորով զանազանվում և մի ազգի իմացականությունը մյուսից և պահում ինքնուրույն տիպը:

Կամավոր կուրությունը և բթացած խղճմտանքը միայն կարող է ուրանալ, վոր մտավոր լուսավորության վրա հակայական աշխատանք և թափվում արդի Հայաստանում:

Յերբ, հվ է տեսել, լսել կարգացել թե Հայաստանում այսքան դպրոց է յեղել: Հարյուր գյուղը մի դպրոց ուներ, իսկ այժմ գրեթե ամեն գյուղը դպրոց ունի: Դպրոցների համար յեռանդով շինվում են կանոնավոր շենքեր: Անգրագիտության գլխին բացարձակ գրագիտության սպառնալիքն է կախված: Ուսուցիչների և աշակերտների հարաբերությունը փոխադարձ հարգանքի և սիրտ վրա չէ դրված: Դպրոցական պատմական ձեռք հեքյաթների աշխարհն է ան-

ցել: Դպրոցն այժմ միայն տեսություններով չի լցնում պատանիների գլուխը, վորոնց վրա տասնյակ տարի կորաքամակ նստած պատանիների ուժերն եյին սպառվում մինչև ավարտում եյին ու մնում լուր տեսականներ, գործնական կյանքի մեջ անպետք հանդիսանալով: Յեվ մենք դպրոցներից ստանում եյինք ուսուցիչներ, իրավարաններ, բժիշկներ, հայ մտավորականություն, վոր ձախորդ հանգամանքով իր մասնագիտության անհաջողության դեպքում քաղցած եր մնում և ծանրանում հասարակության վրա, վորպես մի բեռ:

Այժմյան ուսանողը գործնական կյանքի յե վարժվում տեսականի հետ միասին. մտավոր ուսումն առնելով հանդերձ նա միաժամանակ յերկրագործ է, արհեստավոր, գործնական հաշվագետ, քաղաքական ու քաղաքացիական ըմբռնումների տեր, ծառա իրեն և յուրանց, ծառա ժողովրդին: Այսպիսի շկուլայից յեկած աշակերտը քաղցած չի մեռնի:

Ո՞վ եր տեսել մեր որերում, վոր տուզ հարուստն իր ձեռքով շուկայից բան բերեր իր տունը, կամ մտավորականը յերկրագործությամբ պարապի կամ ուսուցիչը, մեղվաբուծյամբ կամ աշակերտն՝ արհեստով: Ջրացի և հիվանդ մեծամտությունը, այժմ ամենքն են աշխատում ամեն ասպարեզում:

Ուսուցման և դաստիարակության այս յեղանակը ինձ հիշեցնում է Հոռմի նշանավոր գորավար Յինցինատոսին, վորին յերբ հրավիրակներ գնացին խնդրելու, վոր գա գործերի գլուխն անցնի հայրենիքի թշնամու դեմ, դտան դաշտում, յեզները լծած վար անելիս:

Մենք մեր որերում և պատմական կյանքում չենք լսել, չենք տեսել, վոր ֆիզիքական դաստիարակության վրա ուշք դարձնեն:

Հրամեցեք տեսեք, թե մեր պատանիների յերամները դպրոցական ժամերից դուրս ազատ ժամանակ ինչ են անում: Ահա մի վաշտ բահերն ուտերին, գորականի կանոնավոր քայլվածքով գնում ու կանգ առնելով մի տեղ բուռն աշխատանքով ծառեր ե տընկում:

Ահա մի ուրիշը ճարեկների պես ցրվել է դաշտը հունձ ե անում, ահա մյուսները աղջիկ ու տղա մարմնամարզական խաղերով են զբաղված, ահա ուրիշ վաշտեր, շարան-շարան ճամբորդության են յեկեր իրենց ղեկավարների առաջնորդությամբ գյուղ ու քաղաք, հնություն, բույս, հանք, գործարան ուսումնասիրելու:

Այսպիսի դաստիարակությամբ ամրանում են մեր պատանիները շրջերը, յերկաթանում են բազուկները ուժեղանում՝ վոլոքները, լայնանում՝ կրծքերը և մարդ ուրախանում է ու մտածում. «Այս սերնդից մարդ դուրս կը գա»:

Ուսանողը, աշակերտը կուլ են գնացել մտավոր ու ֆիզիքական աշխատանքով, ել ժամանակ չկա, վոր պարապ մնան ու անձնատուր լինեն դպրոցական այն մեղկության, վորով հիվանդ ելին նախկին դպրոցները:

Քաղաքներում ու դավառներում ծավալվում են ընթերցարանները, խրճիթ գրադարանները, յետում գեոում են ժողովները քաղաքական, քաղաքացիական, անտեսական խնդիրների շուրջը և դու սրտի ուրախ թրթիտով հույս յես տածում թե վերակեդանության շունչն և հպիլ այս կիսամեռ, կիսաքանդ, հոգով ու մարմնով հյուժված ժողովրդին:

Ինքնապաշտության բոբռնումների կենսամոնը փոխվել է: Առաջ շլացած աչքերով ու քրճ-

նողի ժպիտով սպասում ելինք, վոր մեր ազգի ջոջերի մուրացիկ աղերսանքներով աշխարհի խաբերա հզորներից փրկություն շահենք: Այժմ ինքնապաշտպանության բնագոյը դորանում և իրեն, ժողովրդի մեջ ինքնակրթությամբ, ինքն իրեն հուսալով, անձնական մտավոր, անտեսական գիտական ինքնաբուզիս դորությամբ:

Այսպիսի դաստիարակության գլուխ կանգնած է հայկական համալսարանը և ուրիշ մասնագիտական գիտական ինստիտուտներ:

Վոչ միայն արհամարանը չը կա ղեպի հայրենի հնություններն ու հնագիտությունը այլ և մեծ ու լուրջ ուշադրություն և տիրում նրանց վրա: Նրանց՝ վորոնք յերբեկեց տեսել են Եջմիածնի վանական փոշեծածք, խառնիխուռն, միշտ փակ ու անմշակ մատենադարանն ու թանգարանը, նրանց եմ հրավիրում վոր դան ու տեսնեն նույն հաստատություններն այժմ, տեսնեն Յերևանի հանրապետական մատենադարանն ու թանգարանը, այդ տեղերում կատարվող յեռուն աշխատանքը, վոր զգան թե վորքան վոլորմելի յենք յեղել մենք, վոր ունայն խոսքով ենք սիրել մեր հայրենիքը և «պանծալի» անգործությամբ:

ՅԵՐԿԻ ապահովություն: Միայն այն յերկրում հնարավոր է իսկապես աշխատել, ուր կյանքի և գույքի ապահովությունն և ախրում:

Սպանությունների, ահաբեկումների, դրամաշորթության, ալանթալանի յերկրում անհնարին է հոգու հանգարտությամբ աշխատել: Թող հիշեն նրանք, վոր ապրել են մեր յերկրում թե՛ վորպիսի ահ ու դողով գյուղից գյուղ, քաղաքից քաղաք ելինք գնում ու գողում թե ահա թիփ տակից, ալգիների միջից, պատերի յետակից, սարի գլխից, անտառի խորքից կը ցցվեն

առաջի ավազակները, «ձեռքերդ դեպի վեր» կը կանչեն ու քեզ մի լավ կը պոկեն. իսկ յեթե դժբախտություն ունեցար ճանաչելու կամ փորձ արիւր ինքնապաշտպանութեան. դիմաւորապէս պիտի ընկնէիր ճանապարհին և քո փութարկն դիակդ պիտի վերադառնար տունդ լացով թաղվելու համար:

Թող հիշեն թե ինչպէս մեծ գլուղներում ու քաղաքներում հարրած ատրճառակաւորները կրակում եւ յին ու շրջում անարգել, ամենդ-ցփեղ խոսքեր շարժում կանանց յերեսին ու անպատիժ մնում:

Ո՞վ կը համաձայնվէր ատրճառակաւորին հակառակ կենալ, յերբ նա տունդ եր մտնում և ուզած բանը պահանջում:

Ո՞ւր են այժմ գրանք, չը կան, կպել են հալալ աշխատանքի:

Դնա այժմ, ուր կամենում ես. գիշերը դնա, ցերեկը դնա ապահով և կյանքդ, գուշդ, պատիվդ:

Յեւ զարմանալին այն ե, վոր վոչ առաջվա ճանապարհների պահակատները կան, վոչ քաղաքապահ եմ յես տեսնում:

Ո՞վ և հակոյր յերկրի ապահովութեան, չը զիտես, վոչ վոք չի յերևում, լայց յերբ հազվադեպ հանցադործութեան և կա ապրում, հանցադործներին ուղղիչ տանը կամ դատարանումը վորոնիւր: Մանրաբառտում և աստիճանական դատարաններում հանցանքները քննելուց հետո, յեթե հանցաւորը անուղղելի մի չարագործ ե, նա արևին ու աստղերին մնաք բարոյն և կարգում, յեթե ուղղելի՝ նա ել բանտ չի գնում, այլ հիւրավի «ուղղելի տուն», ուր կենդանի խոսք ե լսում, գրագիտութեամբ և պարագում գիրք և կարգում, արհեստով և զբաղվում:

Վերաբերուաւ: Չարամխոշուկները, գահերից զլորվածները, շահամոլները, կեղծ հայրենասերները, վոր հայրենիք սիրել են միայն իրենց ծառայեցնելու համար, այլ վոչ թե նրան ծառայելու, տարածում են թե հայ կոմսունիստները աղղ ու հայրենիք չեն ճանաչում: Ծիշա ե, հայրենիքի անունով նրանք չեն բղավում, այդ նրանց նշանաբանը չե և այդ շատ խոհեմ ու խելոք ե, վոր աղղերի փոխադարձ ատելութեանը մեղմանա ու վոչնչանա, վորից ավելի շահ ունի մեր փոքրիկ վատուժ աղղը:

Սակայն իրականը, գործնականը այլ բան ե ասում:

Ե՛ն վոր Լենինականի, Սարգարապատի, Չանգվի հրաշք ջրանցքներն են բաց արել մի քանի տասնյակ հազար զեպատին անջրտի հողերը ջրկու, են ձււմ համար ե:

Ե՛ն վոր նոր խճուղիներ են շինվել ու շինվում են, հինն ու բրնձալը նորոգվում, են ձււմ համար ե:

Ե՛ն վոր ավերակացած աշխարհի անտեր վորքերին տեր են կանգնել ու նրանց համար գեղեցիկ, կանոնավոր գլուղներ, տներ են շինել ու շինում են վորոնք շոկնվում են հայ գլուղացու խուղերից, են ձււմ համար ե: Ե՛ն վոր լերկ ու մերկ յերկրում ծառեր են տնկում, պուրակներով զարդարում, են ձււմ համար ե:

Ե՛ն վոր քաղաքներն են վերաշինում, կանոնավորում, ելեքտրական հակայական կալարաններ են շինում, են ձււմ համար ե:

Ե՛ն վոր մեր զաշտերը բամբակի բույսով ծածկեցին, կտավի և մահուղի գործարանների հիմքն են դնում, են ձււմ համար ե:

Ե՛ն վոր անդրջնհեղջան գործիքներն են առնում հայ գլուղացու ձեռքից ու նորագույն ու լավագույնն են տալիս, են ձււմ համար ե:

Ե՛ն վոր սքանչելի մաքրությամբ ու կանոնաւորությամբ բազմաթիւ հիվանդանոցներ են բացել ու բուժարաններ, են ո՛ւր համար ե:

Ե՛ն վոր ծրագրվում է եկեքարաքարշերով ու հեռախոսներով ցանցապատել մէր յերկիրը. են ո՛ւր համար ե:

Ե՛ն վոր դպրոցական շէնքերով են զուգվում մեր գյուղերը, են ո՛ւր համար ե: Յեւ ալլն, յես չգիտեմ բոլորը:

Այս ամենը միայն հայ ժողովրդի, Հայաստանի համար ե: Յեւ ո՛ւր հայն իրո՞ճմեռը, վոր տաթ թե հայ կոմունիստները իրենց սրտում վոչ ազգ են ճանաչում, վոչ հայրենիք:

Արդ, սիրելի հայրենակիցներ, հակիրճ խոսքով ձեր առջև դրի հայոց յեկեղեցու անցյալն ու ներկան. հայ ժողովրդի կշանքի անցյալն ու ներկան: Այդ պատկերներից յեղբակացությունն հետեյալն ե:

Հայոց յեկեղեցին իր ալլանդակ ազաւալումնեւրով հանդերձ, իր պատմական դերը կատարել ե: Նա ծառայել ե հայ ժողովրդին պետ-պետ բիրտ աշխարհակալների լծի տակ, վորպէս մեր լեզուն պահանող, մեր գրականության, հնության, գեղարվեստի, քաղաքականության ղեկավար, յերբ այս պարտականությունն ու իրավունքը զլացվում եր աշխարհիկ հայ ժողովրդին:

Այժմ այդ դերը չունի նա և չի կարող ունենալ և չպետք է ունենա: Տղիտացած, հղիացած, պորտաբույժ հոգեւոր դասից շատ ամբիլի ե առաջ գնացել մեր ժողովուրդը իր ձեռքն ամփոփելով այն ամեն ազգային հոգեւոր ու մտավոր բարիքները, վորոնք ազգի հոգեւոր միութեան կապերն են: Յեկեղեցին յեթե հիրավի ազգին ծառայելու ե կոչված, ինչպէս յես եմ հաս-

կանում, և վոչ ազգը յեկեղեցուն, ինչպէս յեսամոլներն են հասկանում, պետք ե ուրախ լինի, վոր տղետութեան մանկությունից յիւած ու առնական հասակըն առած հայ ժողովուրդը ինքն իրեն կատաւարում ու առաջադիմում ե առանց հոգեւոր առաջնորդի, վոր շատ անգամ իր կուրութեամբ ղեպի խորխորատն ե տարել նրան: Այժմ այդ յեկեղեցին պետք ե մերկանա քաղաքական քղամիտից, կուլտուրայի ղեկավարութեանից, ձեռք քաշի կաստայական շահից ու ձուլվի իր ժողովրդի հետ ու գնա այն ճամբով, վոր ճանքեն մտել ե այժմ հայ ժողովուրդը: Իսկ այդ ճամբին յես համարում եմ Քրիստոսի գործնական ճամբեն:

Յեկեղեցուն մնում ե մի դեր միայն, այն՝ ինչ վոր Քրիստոսն ե ավանդել իր աշակերտներին. քարոզել Ավետարանի բարոյական գաղափարները՝ սեր, ճշմարտութեւն, արդարութեւն, բարութեւն մաքուր աշխատանք և այս քարոզի հետն ել ներդաշնակել անձի կենդանի որինչակը:

Յեթե այս պատվաւոր կոչումն ել կատարելու մեջ աղեկար հանդիսանար յեկեղեցին, նա անշուշտ կը մեռնի, իրեն-իրեն կը գոցվի. դաւիթ ժողովուրդը նրան յիրեքք չի ճանաչի:

Շատ անգամ մեր «սրբազան» անձերի շրթունքներից այսպիսի մոմտուքներ են դարկել ականջիս. «Գնանք Յեւրոպա, աթոռը փոխադրենք Յերուսաղեմ»: Ինչո՞ւ, կը հարցնեք. լոկ նրա համար, իմ խորին համոզմունքով, վոր արտասահմանի հայկական զաղութները անգիտակ լինելով «սուրբերի» կացութեանը, դեռ պահել են իրենց հմայքը ղեպի Եւմիածին: Այնտեղ հույս ունեն մեր հոգեւորները թե իրենց անաշխատ վիճակի մեջ անծանոթ հայութեան առատաձեռնութեամբ կը շարունակեն ապրել փաշաների պէս, մինչև վոր մեռ-

նեն ու «փառքով» թաղվեն: Յես կը կամենայի, վոր աղպես ել լինիք, վորպեսզի հետագայ հայութունը ճանաչի սրանց ի մոտ: Բայց այդ մտածութիւնները յես համարում եմ կորստական և դավաճանական հենց իրենց աստակաւոր:

Պատմական փաստեր շատ ունենք, վոր աթուրը բուն հայրենիքից յեկեր ու թափառումները և յենթարկվել ստար աշխարհներում և յերբեք հանգիստ չի ունեցել, յերբեք հմայք չի շահել, մինչև վոր աստանդական վիճակից վերադարձել և բնիկ յերկիրը:

Մեր իսկահեղ «սրբազանների» մտածութիւնները նույն են, ինչ վոր փոմանց նման ազգայինները թե՛ նոր հայրենիք ճարենք Ամիրկայում և հայ ժողովրդին տանենք այնտեղ, այսինքն դեպի... գերեզման: Ինչու համար, վորովհետեւ բնիկ յերկիրը այլեւ իրենց չի ծառայում, հայրենիքը տանեն իրենց մոտ, վոր ելի ծառայի:

Յեւ այս հոգեւոր ու աշխարհիկ «հայրենասիրները» վորոնց «աստված վորովայն յուրյանց են»:

Մոլորութիւն և այս, չարաչար մոլորութիւն և կործանում: Յեկեղեցու վերաբերութեամբ արողջանում թանոսականը, անհարիրը, հնացածն ու անպետքը, քաղաքականն ու կուլտուրականը թողնել միայն պարզը, Ալեքսանդրի բարոյական գաղափարները քարոզը և պահանջ դնել, վոր յեկեղեցին մտնի քրիստոնեական գործնական ուղին իր ժողովրդից անբաժան մնալով: Ըստ իս այս և ուղիղը և հայրենասիրականը:

Քաղաքական կացութեան վերաբերութեամբ իմ յեզրակացութիւնը հետեյալն է:

Մենք ունեցել ենք Հայաստանի անկախ իշխանութիւն թագապսակ արքաներով: Բայց իրոք նա յերբեք անկախ չի յեղել. նա միշտ կախված և դեկլ

պարսիկներից, հույներից, հռոմայեցիներից, արաբներից, թաթարներից: Հայաց թագապետները՝ իրենց «անկախութիւնը» պահելու համար մերթ մեկի մերթ մյուսի կողմն ելին բռնել, գրգռել են պատերազմներ և դարերով հայ ժողովրդի թիւը տասնյակ միլիոններից հասցրել են այսորում վոգորմելի քանակին:

Ինչու. գլխավորապէս այն պատճառով, վոր հայը համապետականութեան ըմբռնումն չի ունեցել, թագապետները ժողովրդին. թողել են տգիտութեան խավարի մեջ. տգիտ ժողովուրդը ինքնիրեն փրկելու, պաշտպանելու հնարը, հրաշքը չունի. իսկ թագապետը տգետ գործով միշտ են որը կընկնի, ինչ վոր ընկան հայ թագապետները և ձգեցին հայ ժողովրդին:

Յեթե շատերն են յերազել Հայաստանում հայ թագապետ տեսնել, մեկն ել յես, յեթե շատերն են վոգետրվիլ Հայաստանի անկախ պետութեամբ, մեկն ել յես. յեթե քչերն են իրենց չարքաշ կշանքով ու անձի վտանգով հայրենիքի անկախութեան գործի վրա աշխատել, յեկեղեցուն անձնալիբարար ծառայել, վորպես մի մեջոյի անկախութեան հասնելու համար, մեկն ել յես:

Բայց անցյալն ու ներկան խորապէս համոզեցին մեզ, վոր մեր ճամբն սխալ և յեղել, դադանաշատ անառնելով և ընկել և վերջանալու և իր անդունդով: Յեւ մենք յեթե բանական արարածներ ելինք, պետք, - հետ դառնայինք այդ ճանապարհից անդունդ չը գլորել վելու համար:

Յեւ Ռուսական հեղափոխութեան շեփորը մեզ սթափեցրեց և մենք մտանք ուղիղ ճամբան՝ հայ ժողովրդին Հայաստանի մեջ քաղափոր հեռանալու ճամբան:

Այդ ժողովուրդն այժմ և իր ծառան և, և իր արքան: Անհատ թագապետը չէ, վոր շինում և նրա բրիշակ

յերկիրը, այլ ինքը. թագավորը չե, վոր նրան աշխատանքի, վերականգնության թափն և ներշնչում, այլ ինքը և նրա դպրոցը համայնակեցության, յիդրայրության, հավասարության դպրոցն և, վոր կառուցել են ռուսական համայնակեցության մեծ առաքյալները բոլոր մանր, տանջված ժողովրդի համար և հայ համայնակյացները՝ Հայաստանի համար:

Ախր ես են դպրոցն և, վոր քարոզել և ֆրիստուր և նրա համար իռաչվել. ես են դպրոցն և, վոր քարոզեցին առաքյալները, վոր մի հրաշալի ճառով ներբողել և բոլոր յեկեղեցիների համար սուրբ Հովհան Վոսկեբերանը և հին արժանավոր յեկեղեցական հայրերը:

Հայ ժողովուրդն այժմ իր լեզվի, իր գրականության, իր գիտության, իր կուլտուրայի տերն է, վորոնց ղեկավարությունը գտնվում և ուժեղ ժողովրդական կառավարության ուժեղ ձեռքերում:

Իմ խորին համոզմունքով ով չի նպաստում Հայաստանի նոր կյանքի վերակազմության, Հայաստանի վերաշինության, նա հայ չե. իսկ ով խոչնդրան է հանդիսանում այդ վերականգնության, նա չարագործ է:

Վստահացնում եմ ձեզ, հայրենակիցներ, վոր յեթե մեր յերկիրը հարուստ լիներ և վոչ բրիշակացած, Խորհրդային կառավարության այս անորինակ աշխատանքի թափը մի քանի տարվա մեջ նրա գորշ, անհրապույր պատկերը մի բարեկից, քաղաքակիրթ յերկրի կը փոխեր:

Իմ սրտաբուլ խոսքի վերջում յես պարտք եմ համարում ձեզ կոչ անել, սիրելի հայեր, անուշադիր թողնել նախանձից ու յեսականությունից բղխող չարահնար լուրերը և ողնել մեր հայրենիքի վերաշինության գործին: Վստահացնում եմ ձեզ, վոր Խորհրդային

Հայաստանի այս նորորինակ իրավակարգի մեջ ձեզ կողելը չի կորչի, այլ նպատակին կը ծառայի: Հայրենիքի վերաշինության համար գործըրվելիք կողելը վատնողի վարձը մահու պատիժն է, ով էլ վոր նա լինի. անխտիր:

15—20 հազար վորք ունենք, գրագետ, պատրաստված ու պատրաստվող, վորոնք պատասխարան չունին. սրանք մեր գալիք ժողովուրդն են: Սրանց համար յերկու քաղաք շինեցին, իսկական հայ քաղաք, վոր մի 10 տարուց հետո գաք ու Հայաստանի նորաբաց ծաղիկը տեսնեք, բուրաստանը մեր յերկրի ձեք տեսած փլատակների վրա:

Ոգնեցեք Հայաստանի վերաշինության ինչպես և ինչ ձևով վոր կամենաք:

Բարոյական պարտքս կատարեցի, խոսքիս արժեք տալը կամ արհամարհելը, հայրենակիցներ, ձեզ եմ թողնում, ձեր խոհեմության, ձեր ազնվության,

Մնալով միշտ հայ ժողովրդի ծառա

Բենիկ Ծ. Վարդապետ

1924, հոկտ. 5 ծնվածին



ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԲԵՆԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԲԵՐԸ.

1. Թալանի վանքը 15 Կ.
2. Կուսակրոնությունը անառակություն է: Մոտ-
տիապաշտությունը բրիտանիություն չէ 10 Կ.
3. Դիմում հայ քահանայության 10 Կ.
4. Եջմիածնի «Գերագույն խորհուրդը» . . 20 Կ.

<< Ազգային գրադարան



NL0419091

104

ԳԻՆԳ Է 20 ԿՈՍՊ.
